ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Այս տարվա մարտի 20-ին կայացավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը։

Բաց անելով ժողովը, ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանն ասաց, որ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ամբողջ գործունեությունը հաշվետու տարում ընթացել է Վլադիմիր Իլյիչ Լենինի ծննդյան 100-ամյակը և Հայաստանում սովետական իշխանության հաստատման 50-ամյակը գիտական նոր նվաճումներով դիմավորելու նշանաբանով։ Հայ գիտնականների նվաճումները համընդհանուր ճանաչման են արժանացել։ 1969 թ. հոկտեմբեր ամսին Մոսկվայում անցկացված Հայաստանի գիտության լենինյան օրերը ոչ միայն հանրապետության գիտնականների ստուգատես էին, այլև յուրահատուկ հաշվետվություն հայ գիտնականների աշխատանքների մասին։

Հայաստանի գիտնականների աշխատանքը ըստ արժանվույն գնահատվել է կառավարության կողմից։ Գեոֆիզիկական գիտության զարգացման և բարձրորակ գիտական կադրերի պատրաստման համար ՀՍՍՀ ԳԱ գեոֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտը պարգևատրվեց Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։ Սովետական գիտության զարգացման գործին մատուցած մեծ ծառայությունների համար ՀՍՍՀ ԳԱ հանգուցյալ ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանին շնորհվեց սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում։ Կառավարական պարգևների են արժանացել հայ գիտնականներից շատերը։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի 1969 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցմամբ հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար Գ. Ս. Դավթյանը։

Հաշվետու ժամանակաշրջանում ակադեմիայի գիտահետազոտական հիմնարկները լուրջ նվաճումների են հասել գիտության տարբեր բնագավառներում։ Ընդլայնվել է ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտների ցանցը։ Հաշվետու տարում ակադեմիայի համակարգն անցավ ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտը, փիլիսոփայության և իրավունքի սեկտորի բազայի վրա ստեղծվեց համանուն ինստիտուտ։

Հաշվետու տարում Լենինի շքանշանակիր Բյուրականի աստղադիտարանի գիտական աշխատողները հայտնաբերել են մեծ քանակությամբ գալակտիկաներ, որոնց մանրակրկիտ հետազոտությունները կարևոր գիտական արդյունքների բերեցին. աստղադիտարանի գիտաշխատողները Հունգարիայի, Մեքսիկայի և Իտալիայի աստղագետների հետ միասին հայտնագործել են բազմաթիվ բոնկվող աստղեր։

Հայ գիտնականները զգալի նվաճումների են հասել մաթեմատիկայի, մեխանիկայի, ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի բնագավառներում։

Հայ քիմիկոսները ակնառու հաջողություններ ունեն։ Շարունակվել են նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի «որս դեղամիջոցների՝ հակաբիոտիկ նալեցինի, հակառիթմիկ միջոց դիզամիդի, արպեֆինիլի և ինդոխինի կլինիկական փորձարկումները։ Ինստիտուտում շարունակվել են նոր պրեպարատների հայտնաբերումն ու փորձարկումները։ Նախատեսված է դեղամիջոցները արտադրել Հայաստանում կառուցվելիք դեղագործական նոր գործարանում։

Բիոքիմիայի ինստիտուտի գիտնականները կարևոր արդյունքներ են ստացել գլխուղեղում ցածր մոլեկուլյար միացությունների դերի մասին։

Երկրաբանական գիտությունների ինստիտուտը շարունակում էր ուսումնասիրությունները «Երկրի կառուցվածքը և զարգացումը» պրոբլեմի ուղղությամբ։ Կազմվել է Հայկական ՍՍՀ երկրաբանական նոր քարտեզ։ Հաշվետու տարում ինստիտուտի կողմից առաջին անգամ ուսումնասիրվել և նկարագրվել են հրաբխային նոր կենտրոններ։

Գեոֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտում որոնվում էին երկրաշարժերի կանխագուշակման մեթոդներ, ուսումնասիրվում երկրաշարժերի ֆիզիկական և սեյսմիկ վտանգի շրջանացումը։

Գիտական կարևոր նշանակություն ունեցող հաջողություններ կան կենսաբանական գիտությունների բնագավառում։ Շարունակվել են Հայաստանի բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրությունները, որի հետևանքով հայտնաբերվել են նոր ենթատեսակներ։ Ագրոքիմիական պրոբլեմների և հիդրոպոնիկայի ինստիտուտում կուտակվել են անհրաժեշտ կարևոր տվյալներ՝ սննդատարրերի հաշվեկշռի հաշվարկումների համար։ Սևանի հիդրոբիոլոգիական կայանում կատարվող գիտական աշխատանքների հետևանքով ցույց է տրվել, որ զգալի փոփոխություններ են կատարվում լճում ընթացող կենսաբանական պրոցեսների մեջ։

Հասարակական գիտությունների բնագավառում շարունակվել են աշխատանքները հայ ժողովրդի պատմության, լեզվի, գրականության,

հնագիտության, արվեստի, փիլիսոփայության և իրավունքի, տնտեսագիտության և արևելագիտության բնագավառներում։

Ակադեմիայի ինստիտուտները հաշվետու տարում հրատարակել են բազմաթիվ աշխատություններ, ինչպես նաև հայ դասական մի շարք գրողների երկերը։ Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակի առթիվ հրատարակվել են մի քանի աշխատություններ։ Կոմիտասի 100-ամյա հոբելյանի կապակցությամբ հայերեն և ռուսերեն լեզուներով հրատարակվել են մի քանի մենագրություններ։

Հաշվետու տարում զգալիորեն ընդլայնվել են Հայկական ՍՍՀ ԳԱ միջազգային կապերը։ Տեղի է ունեցել 73 արտասահմանյան գործուղում (1968 թ. 42 գործուղման դիմաց), ակադեմիայի գիտնականները եղել են ԱՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում, Ճապոնիայում, Իտալիայում, Շվեյցարիայում, Իսպանիայում, Հոլանդիայում, Հունգարիայում, Լեհաստանում ԳԴՀ-ում, Բուլղարիայում։ Նրանք ակտիվորեն մասնակցել են միջազգային բազմաթիվ գիտաժողովների աշխատանքներին, ելույթ ունեցել իրենց հետազոտությունների արդյունքներին նվիրված զեկուցումներով, արժանավայել ներկայացնելով սովետական գիտությունը և պրոպագանդելով նրա նվաճումները։ Գիտական կապերի գծով ակադեմիայի գործունեությունում հատուկ տեղ են գրավում Հունգարիայի գիտությունների ակադեմիայի հետ անմիջական գիտական համագործակցության հարցերը։

Հաշվետու տարում հանրապետության ակադեմիայի գիտական հիմնարկներն են այցելել աշխարհի 19 երկրների շուրջ 130 գիտնականներ։ Մեծ թվով արտասահմանյան գիտնականների մասնակցությամբ հանրապետությունում հաջողությամբ իրագործվել են այնպիսի կարևոր միջազգային գիտական միջոցառումներ, հնչպիսիք են գիտական միությունների միջազգային խորհրդի գործկոմի նստաշրջանը, ֆրանս-սովետական պատմաբանների IV կոնֆերանսը, բարձր էներգիաների արագացուցիչներին նվիրված գիտաժողովը և այլն։

ՀՍՍՀ ԳԱ 1969 թ. գիտական գործունեությանը նվիրված տարեկան ընդհանուր ժողովին նախորդեցին ակադեմիայի բաժանմունքների նիստերը, որտեղ քննարկվեցին բաժանմունքների մեջ մտնող ինստիտուտների 1969 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքները։

Մարտի 24-ին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի մեծ դահլիճում կայացավ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը՝ նվիրված Վլադիմիր Իլյիչ Լենինի ծննդյան 100-ամյակին։

Ճառով հանդես եկավ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ն. Քոչինյանը, որը հանրապետության գիտնականներին, գիտության ասպարեզի բոլոր աշխատողներին հաղորդեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության և Մինիստրների սովետի ջերմ ողջույնը և ցանկացավ նորանոր հաջողություններ սովետական առաջավոր գիտության ծաղկման և բարգավաճման բնագավառում։

«Վ. Ի. Լենինը և բնագիտությունը» զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։

Ա. ԹԱՐՍԵՂՅԱՆ